

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Դերձակ – մոդելավորող
I. Դերը՝	Դերձակ-մոդելավորողը հագուստի նորաձևության տներում, հագուստի արտադրության կազմակերպությունների փորձարարական տնտեսությունում, ինչպես նաև անհատական գործունեությամբ զբաղվելիս կատարում է կանացի, տղամարդու և մանկական թեթև հագուստի տեխնիկական էսքիզավորում, մարմնի կազմվածքի չափումներ, պատրաստում է լեկալներ, ընտրում է նյութեր, ձևում և կարում է արտադրանքը, կատարում է հագուստի նորոգում, ձևափոխում և վերաձևում, տրամադրում է խորհրդատվություն:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Ընդունել պատվիրատուին և նախապատրաստել պատվերի ձևակերպումը	
Աշխատանքային գործընթացը	Ընդունել պատվիրատուին, ողջունել, բացահայտել պատվիրատուի կարիքը, ներկայացնել պատվերի կատարման կարգը և պայմանները, տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում պատվիրատուին ուղեկցել ղեկավարության մոտ, պատվիրատուի վերջնական համաձայնությունից հետո նախապատրաստել պատվերի ձևակերպումը:
Կատարման չափանիշներ	Հաճախորդը տեղեկացված է պատվերի կատարման ժամկետների, գնի, միջանկյալ այցելությունների մասին: Պատվերի բոլոր առանձնահատկությունները, պատվիրատուի պահանջները մասնագիտորեն ճիշտ բացահայտված են, պատվիրատուի ներկայացրած հումքի և նյութերի պիտանիությունը գնահատված է, պատվերի վերջնական ձևի վերաբերյալ պատվիրատուի համաձայնությունը առկա է:
Խնդիրների բնագավառ 2. Կատարել հագուստի տեխնիկական էսքիզավորում և անհրաժեշտ հիմնավորումներ	
Աշխատանքային գործընթացը	Պատվիրատուի բանավոր նկարագրի, նորաձևության ամսագրերի նկարների, ինչպես նաև համանման այլ աղբյուրների հիման վրա կատարել հագուստի տեխնիկական էսքիզը, օգնել պատվիրատուին գործվածքը և այլ նյութերը ընտրելու հարցում, պատվիրատուի կողմից նյութերը ներկայացրած լինելու դեպքում գնահատել դրանց որակը, համադրելիությունը և համապատասխանությունը պատվերին, դրանց քանակի և չափսերի բավարար լինելը, եզրակացություն անել պատվերի կատարման տեխնոլոգիական և նախագծման առանձնահատկությունների վերաբերյալ:
Կատարման չափանիշներ	Էսքիզը համապատասխանում է պատվերին, էսքիզում պահպանված են պատվիրատուի կազմվածքի և ոճային առանձնահատկությունները, էսքիզի վրա առկա են անհրաժեշտ նշումները և գրառումները, էսքիզը կատարված է հագուստի առաջամասի և թիկնամասի համար, էսքիզում հաշվի են առնված մարդու ֆիզուրայի համաչափությունները: Գնահատված է գործվածքի բաղադրությունը, ճմրթվելիությունը, մտնելիությունը, պիլինգավորումը, ամրությունը, ներկի կայունությունը: Ստուգված է նյութերի բավարար լինելը պատվերը կատարելու համար:
Խնդիրների բնագավառ 3. Կատարել աշխատատեղի նախապատրաստման և սպասարկման աշխատանքներ, շահագործել մեքենասարքավորումները	

Աշխատանքային գործընթացը	Ստուգել աշխատատեղի ապահովվածությունը անհրաժեշտ նյութերով, գործիքներով, պարագաներով, արտահագուստով: Ստուգել մեքենասարքավորումների պատրաստ լինելը աշխատանքին, կարգավորել մեքենասարքավորումների աշխատանքի ռեժիմները, յուղել և մաքրել դրանք, միացնել և անջատել մեքենասարքավորումները, կատարել պարզագույն նորոգման գործողություններ, թելել մեքենան, լիցքավորել մաքոքը, անհրաժեշտ ռեժիմները պահպանելով շահագործել մեքենասարքավորումները, հավաքել աշխատատեղը:
Կատարման չափանիշներ	Աշխատատեղն ապահովված է անհրաժեշտ միջոցներով, մեքենասարքավորումների տեխնիկական սպասարկման գործողությունները կատարվում է ժամանակին, սարքավորումները գործում են անխափան, դրանց ռեժիմները կարգավորվում են, աշխատատեղը մաքուր և հավաքված է:
Խնդիրների բնագավառ 4. Կատարել հագուստի նախագծում, ստանալ լեկալներ	
Աշխատանքային գործընթացը	Ըստ հագուստի տեսակների նախագծման կարիքների կազմել մարդու մարմնի չափումների ցանկը, կատարել և գրանցել չափումներ, տեղեկատուներից դուրս գրել նախագծման ժամանակ օգտագործվող ստանդարտ տվյալներ, ընտրել հաշվարկի բանաձևեր, կատարել նախագծման համար անհրաժեշտ հաշվարկներ, կառուցել հիմքի գծագրեր, ապահովել հագուստի միացվող մասնիկների եզրագծերի և ուրվագծերի համադրելիությունը, ըստ պատվերի հիմքի գծագրի վրա փոփոխություններ կատարել՝ ապահովելով անհրաժեշտ համաչափությունները, ստուգել գծագրի ճշտությունը, կատարել տեխնիկական մոդելավորում, հստակեցնել մասնիկների եզրագծերը, կարաբաժիններն ավելացնելով և չրթվածքները նշելով ստանալ նախնական լեկալներ:
Կատարման չափանիշներ	Հագուստը նախագծելու համար անհրաժեշտ բոլոր տվյալները առկա են, մարդու մարմնի չափումները ճիշտ է կատարված, հաշվարկի բանաձևերը ճիշտ են ընտրված, հաշվարկները լրիվ և ճիշտ կատարված են, կատարված է հագուստի նախագծումը, գծագրի վրա առկա են հագուստի բոլոր մասնիկները, գծագիրը կատարված է գրազետ, կատարված են բոլոր գրառումները և նշումները, գծագրի փոփոխությունները ճիշտ են կատարված, նախնական լեկալները ստացված են:
Խնդիրների բնագավառ 5 Ձևել գործվածք, պատրաստել մակետ	
Աշխատանքային գործընթացը	Ձևել մակետային գործվածքը, բլանդել մակետի մասնիկները, կատարել առաջին չափափորձում, ճշտել նախնական լեկալները և ստանալ հիմնական և օժանդակ աշխատանքային լեկալներ, լեկալները տեղադրել գործվածքի վրա հնարավոր օպտիմալ եղանակով, պահպանելով հենքաթելի ուղղությունը և հաշվի առնելով այլ անհրաժեշտ պայմաններ, կավճագծել և ձևել դետալները:
Կատարման չափանիշներ	Մակետային գործվածքի վրա լեկալները տեղադրված են ճիշտ և արդյունավետ ձևով, ձևումը կատարված է, հագուստի նմուշը պատրաստված է, չափափորձումը ապահովել է անհրաժեշտ տվյալները ստացումը, նախնական լեկալները ճշտված են և ստացվել է աշխատանքային լեկալները, հիմնական գործվածքից ստացվել է մասնիկների ձևվածքը:
Խնդիրների բնագավառ 6 Կարել և հարդարել հագուստ	
Աշխատանքային գործընթացը	Մշակել հագուստի մանր մասնիկներ, մշակել հագուստի հիմնական դետալները, կատարել չափափորձումներ, հավաքել հագուստը, տեղադրել ֆուրնիտուրա և հարդարող տարրեր, կատարել

	հագուստի միջանկյալ և վերջնական հարդարման գործողություններ, ստուգել պատրաստի հագուստը, հանձնել հագուստը:
Կատարման չափանիշներ	Հագուստի մանր մասնիկների մշակումը կատարված է, պահպանված են պատվերի բոլոր առանձնահատկությունները, ամբողջական հագուստը համապատասխանում է պատվերին և ճիշտ հարդարված ու ձևավորված է:
III. Պատասխանատվությունը	Դերձակ մոդելավորողը պատասխանատու է պատվերը ճիշտ ձևակերպելու, պատվերին համապատասխան հագուստի տեխնիկական էսքիզավորումը կատարելու, հումքի և նյութերի ընտրության հարցում պատվիրատուին խորհրդատվություն տրամադրելու, նյութական միջոցները արդյունավետ օգտագործելու, պատվերի կատարման ժամկետները պահպանելու, աշխատանքը պատվերի պահանջներին համապատասխան կատարելու համար:
IV. Լեզուները	Հայերեն՝ գերագանց Օտար լեզու՝ բավարար
V. Համակարգիչը	MS Word - բավարար Internet Explorer՝ բավարար
VI. Գիտելիքները	Հագուստի նյութերի, դրանց հատկությունների իմացություն, հագուստի նախագծման հիմունքների, մեթոդների, անհրաժեշտ հաշվարկներ կատարելու իմացություն, հագուստի և դրա մասնիկների ու հանգույցների մշակման տեխնոլոգիայի իմացություն, հագուստի մոդելավորման ձևերի և եղանակների առանձնահատկությունների իմացություն, գիտելիքներ նորաձևության ոճերի և ուղղությունների վերաբերյալ, հագուստի արտադրության համար օգտագործվող մեքենասարքավորումների շահագործման, պարզ նորոգումներ կատարելու, տեխնիկական սպասարկման վերաբերյալ գիտելիքներ, մարդու մարմնակազմության, ըստ սեռահասակային կազմի հագուստի առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ:
VII. Կարողությունները և հմտությունները	Հագուստի համար հումք և նյութեր ընտրելու կարողություն, հագուստի մասնիկների և հանգույցների մշակման ռեժիմներն ընտրելու կարողություն, մեքենասարքավորումները, գործիքներն ու հարմարանքներն ընտրելու կարողություն, հագուստի մասնիկների ներդաշնակ ձևեր ընտրելու կարողություն, նորաձևության պահանջները պահպանելու և կիրառելու կարողություն, հագուստի նախագծման համար անհրաժեշտ հաշվարկները կատարելու կարողություն, մարդու մարմնի անհրաժեշտ չափումներն ընտրելու կարողություն, հագուստի ոճերում կողմնորոշվելու կարողություն, աշխատանքների կատարման արդյունավետ ձևեր ընտրելու կարողություն, հագուստի մասնիկները մշակելու, ամբողջական հագուստը պատրաստելու հմտություն, մեքենասարքավորումները կիրառելու և համապատասխան գործիքներից ու հարմարանքներից օգտվելու, դրանց տեխնիկական սպասարկման անհրաժեշտ աշխատանքներ կատարելու հմտություն, հագուստի էսքիզավորման հմտություն, հագուստի նախագծեր կատարելու հմտություն, մարդու մարմնի անհրաժեշտ չափումներ կատարելու և գրանցելու հմտություն:
VIII. Վերաբերմունքը	Հաղորդակցվող, թիմային աշխատանքի պատրաստ, նորին ձգտող, ստեղծագործական մտածելակերպ ունեցող, ընկերասեր, հումորի զգացում ունեցող, համբերատար, պարտաճանաչ, ազնիվ:

0515 «ԶԱՐԴԱԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ԴԵՐՁԱԿ - ՄՈՂԵԼԱՎՈՐՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՐՇԵՍԱՎՈՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «Զարդակիրատական արվեստ» մասնագիտության «Դերձակ-մոդելավորող» որակավորման արհեստավորի մասնագիտական պատրաստվածության գնահատումն իրականացվում է նրա մասնագիտական դերին համապատասխան կոնկրետ գործողությունների կատարման հիման վրա: Այդ ընթացքում նա պետք է որոշակի մասնագիտական խնդիրներ լուծելու միջոցով ցուցադրի ձեռք բերված հմտությունները և կարողությունները: Մասնագիտական պատրաստվածության մակարդակի գնահատման նպատակով սահմանվում են հետևյալ չափանիշները.

1. Տղամարդու, կանացի և մանկական թեթև հագուստի էսքիզի կատարում պատվիրատուի ներկայացրած նկարագրի, կամ հագուստի մոդելի նկարի հիման վրա: Էսքիզում պետք է պահպանված լինեն այն մասնագիտական պահանջները, որոնք անհրաժեշտ են հագուստի պատրաստման հաջորդ քայլերը կատարելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է մասնագիտական չափանիշներով հիմնավորել էսքիզը:
2. Տղամարդու, կանացի և մանկական թեթև հագուստի նախագծման համար անհրաժեշտ էլակետային տվյալների իմացություն, դրանց ձեռքբերման կարողություն, անհրաժեշտ հաշվարկներ կատարելու մեթոդների կիրառման հմտություն:
3. Նորաձևության և հագուստի ոճերի ուղղությունների վերաբերյալ գիտելիքների գործնական կիրառման ցուցադրում:
4. Մասնագիտական տերմինաբանության ճիշտ կիրառում:
5. Տղամարդու, կանացի և մանկական թեթև հագուստի պատրաստման ընթացքում տեխնոլոգիական ռեժիմների պահպանում, գործողությունների ճիշտ կատարում:
6. Համապատասխան մեքենասարքավորումների, գործիքների և այլ հարմարանքների ճիշտ և նպատակային օգտագործում, դրանց տեխնիկական սպասարկման պարզ գործողությունների կատարում:
7. Տղամարդու, կանացի և մանկական թեթև հագուստի պատրաստման համար ըստ հաշվարկի արդյունքների կամ այլ եղանակով նախագծումների կատարում, լեկալների ստացում, դրանց ճշտումների կատարում, գործվածքի ձևում՝ հնարավոր արդյունավետ տարբերակով:
8. Տղամարդու, կանացի և մանկական թեթև հագուստի մասնիկների նախապատրաստման և մշակման գործողությունների կատարում՝ կիրառելով համապատասխան հարմարանքներ, ընտրելով և կատարելով անհրաժեշտ կարատեսակները:
9. Տղամարդու, կանացի և մանկական թեթև հագուստի պատրաստում ամբողջական տեսքով, որը պետք է համապատասխանի հանձնարարությանը: Պատրաստի հագուստի որակի գնահատում:
10. Հագուստի հարդարման գործողությունների կատարում՝ պահպանելով համապատասխան ռեժիմները:

11. Հագուստի արատների հնարավոր պատճառների բացահայտում և արատների վերացում:

12. Ըստ իրավիճակների խորհրդատվության տրամադրում հաճախորդին:

Մասնագիտական դերին համապատասխան սույն գործողությունները կատարելու, անհրաժեշտ բացատրությունները և հիմնավորումները տալու ընթացքում դերձակմողելավորողը պետք է պահպանի գոյություն ունեցող տեխնոլոգիական նորմատիվները, աշխատանքի անվտանգության կանոնները: